23141

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՓԱՅՏԱՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ

## ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏՖԻՆ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳԾՈՎ

331.1
Փ-18

Հրատ. Ռեկլամ Ինֆորմ—Բյուրոյի

ՅԵՐԵՎԱՆ 1933 Թ.

1016
40

Պետհրատի տպ. Վլ' 8461 պատվ. № 1090 տ, 400

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՏՖԻՆ ՊԼԱՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳԾՈՎ

Սույն հավաքական պայմանագիրը կնքվում է մեկ կողմից Յերևանի Փայտամշակման Գործարանի բանվորների և ծառայողների հանձինս Գործարկոմի նախագահ՝ ՄԱՐՈՒՔՅԱՆ ԽԱՉԻԿԻ, մյուս կողմից վորը հետագայում կոչվելու յե Գործարկոմ և գործարանի դիրեկտոր՝ Խաչատրյան Արմենակի, վորը հետագայում կոչվելու յե «ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» միջև։

## 1. ՓՈԽԱՏԱՐՁ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՏՖԻՆՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳԾՈՎ

Սույն պայմանագիրը կնքող կողմերը— նպատակ են դնում ընկ. Ստալինի 6-ցուցմունքների կենսագործման նշանաբանի տակ՝ ծավալել սոցմրցումն ու հարվածայնությունը, կիրառել սոցիալիստական աշխատանքի բարձր ձևերը, գործառք, աշխատավարձի պրեմյալ սիստեմը և այլն. հիմնականում ապահովելու համար գործարա-

27 AUG 2013

նի II-րդ կիսամյակի I-ին տարվա արտ-ֆինպլանների քանակական և որակական ցուցանիշների լրիվ և անթերի կատարումը։

1. Վարչությունը պարտավորվում է.

ա) Բացի տարեկան և եռամսյակային պլանները ցեխերին ու դազգյահներին հասցնելուց ամսական պլանները ևս ցեխերին ու դազգյահներին հասցնել ոչ ուշ քան նախորդ ամսվա 30-ը։

բ) Բոլոր այն աշխատանքները, որոնք հնարավոր է յենթարկել քանակական հաշվառման, անցկացնել գործավարձի։ Ամբողջ գործարանի 90 տոկոսը յենթարկել տեխնորմիրովկայի։

2. Բանվորները ՃՏՍ-ի անդամները և ծառայողները իրենց վրա յեն վերցնում կատարելու հետևյալը՝

բ) Միջոցներ ձեռք առնել՝ կանխելու և կրճատելու պարապուրդները, արմատախիլ անելու խոտանը, առավելագույն չափով օգտագործելու բանվորական օրը, կատարել ու գերակատարել սահմանված առաջադրանքները. միաժամանակ խոշոր ուշադրություն դարձնել արտադրանքի որակի բարձրացման վրա։



| №№ ըստ կարգի | Ցեխերի անունը | Բան. քանակը | Արտադր. պլանով 26/27 թ. գներ | Բան. արտադրողակ. 26/27 թ. գները | Արտադրողական. բարձրաց. 32 թ. դիմաց | Ինքնարժեք իջեցում | Ծանոթութ. |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մեքենայա. ցեխեր | 66 | 654200 | 9912 | 118,8 | | Մեք. ցեխի պլանը ցույց է տրված ցեխի ինքնարժենքով։ |
| 2 | Հավաքական ցեխեր | 101 | 1307800 | 12944 | | | |
| 3 | Կրացման ցեխ | 22 | 144000 | 6546 | 134,7 | | |
| | Գումարը | | 1451300 | 6810 | 120,1 | | |
| 4 | Ուսուլ ցեխ | 15 | 82500 | 5500 | — | — | |
| | Ընդամենը | — | 1533800 | — | — | 1,8 | |

գ) Խնամքով վերաբերվել սարքավորումներին ու գործիքներին, խնայողաբար ծախսել հումքը, վառելանյութը, կիսաֆաբրիկատները և նյութեղենները, թույլ չտալ ավելացնելու բանուժը, նյութեղենի, հումքի ծախսման պլանով սահմանված նորմաները:

դ) Սեփական որակը բարձրացնելու համար հաճախել տեխնիկային ուսուցա-ման նպատակով կազմակերպված խմբակային պարապմունքներին:

ե) ԻՏ. աշխատողները և որակյալ բանվորները պարտավորվում են իրենց արտադրական փորձն ու գիտելիքները փոխանցել բանվորական նոր կադրերին:

3.—Գործարկոմը պարտավորվում է՝

ա) Գործարանի բանվորներին, ԻՏ. աշխատողներին և ծառայողներին մոբիլիզացիայի յենթարկել սոցմրցման և հարվածայնության, արտադրական խորհրդակցությունների աշխատանքների ուժեղացման միջոցով՝ ապահովել արտֆինպլանների վո-



րակական ու քանակական ցուցանիշների կատարումը:

բ) Վարչության հետ կազմակերպել ցեխային ինֆորմացիոն աշխատանքը, որի միջոցով բանվորների սեփականությունը դարձնել արտադրական առաջադրանքները, նրանց դեկադային կատարումը իրազեկ դարձնելով սոցմրցման ու հարվածայնության ընթացքը:

Ամեն կերպ աջակցել վարչության հակահրդեհային պաշտպանության կազմակերպելու գործում, ապահովելով միության անդամներին ակտիվ մասնակցությունը բանվորական հրշեջ խմբերում:

## 2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

4.—Լայն մասսայական բացատրական աշխատանքների միջոցով աշխատել կանխելու պրոգուլները, միևնույն ժամանակ խիստ լինել պրոգուլշչիկների նկատմամբ, կիրառելով Համկոմկուսի և Ժողկոմխորհի 1932 թվի նոյեմբերյան որոշումները, միաժամանակ խիստ վերաբերմունք ունենալով նրանց դեմ, ովքեր «հարգելի» կոչված պատճառներով կքողարկեն իրենց պրոգուլը:

5.—Բանվորների վորակը բարձրացնելու համար վարչությունը պարտավորվում է՝

ա) Մինչև 15-ը ապրիլի բանալ տեխնիկայի տիրապետման կարճատև դասընթացներ, վորի համար հատկացված 3000 ռուբլին ոգտագործել իր նպատակին։

բ) Մասնակցել Կոմբինատ-դպրոցի ծախսերին 16500 ռուբլու սահմաններում, ապահովել գործարանի բանվորներին այնտեղ սովորելը։

գ) Հատկացնել բանվորների, ԻՏ. աշխատողների և ծառայողների հեռակա ուսուցման համար 2500 ռուբլի։

դ) Մասսայական տեխնիկական գրադարանի ճոխացման և տեխպրոպագանդայի աշխատանքներին հատկացնել 250 ռուբլի։

յե) Տրամադրել տարեկան 5000 ռուբլի բանվորների և ԻՏ աշխատողների գիտական, արտադրական և տեխնիկական էքսկուրսիաների համար։ Յուրաքանչյուր էքսկուրսիայի թեկնածուների ընտրու-



թյան խնդիրը նախորոք համաձայնեցնել Գործարկոմի հետ։

յե) Մինչև մայիսի մեկը կազմակերպել տեխնիկական կոնսուլտացիա, ցածր վորակի բանվորներին տեխնիկական ոժանդակություն ցույց տալու համար։

զ) Յուրաքանչյուր յեռամսյակում բանվորներին բարձր վորակի աշխատանքների փոխադրելու նպատակով, մշակել կոնկրետ պլան՝ նշելով պրոֆեսիաները և նրանց թիվը։

6. Գործարկոմը պարտավորվում է ապահովել կազմակերպված դասընթացները հարկ յեղած ունկնդիրներով։

7. Ֆաբգործուսն ավարտած աշակերտներին ոգտագործել արտադրության մեջ ըստ մասնագիտության, ստեղծելով նպաստավոր պայմաններ նրանց վորակավորման համար։

8.—Վարչությունը պարտավորվում է ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները ուսանողության պրակտիկայի հաջող անցկացման համար, դրա պատասխանատվությունը դնել համապատասխան մասնագետների վրա։

9. Այն անձիք, վորոնք սովորում են վարչության միջոցներով մի վորևիցե ուսումնական հիմնարկում (դասընթաց՝ հեռակա, ստացիոնար և այլն) պարտավորվում են իրենց սովորած ամեն մի ամսի համար, գործարանում աշխատել հինգ ամիս, հակառակ դեպքում վճարում են վարչությանը իրենց ուսման վրա ծախսված գումարը, դուրս գալով աշխատած ժամանակամիջոցը։

10. Գործարանի վարչությունը պարտավորվում է՝

ա) Հինգ օրվա ընթացքում քննել բանվորների ՃՏ աշխատողների և ծառայողների կողմից առաջարկած գյուտերը և բարեփոխումները, կարճ ժամանակամիջոցում հայտնել հեղինակին արդյունքների մասին։ Ընդունված գյուտերի և բարեփոխումների տնտեսական եֆֆեկտը պարզելուց հետո հեղինակին պարգևատրել գոյություն ունեցող օրենքների հիման վրա։

բ) Առաջարկած գյուտերի և բարեփոխումների հետ կապված եքսպերտ քննությունը, հաշվեառումը և յուրացումը ապա-



հովել անհրաժեշտ նյութական միջոցներով։

գ) Տնտհաշվարկի անցնել ցանկացող ցեխերի և բրիգադների հարցը լուծել հինգ օրվա ընթացքում, մշակելով նրանց համար առանձին ցուցանիշներ և կնքելով համապատասխան պայմանագիր (ԺՏԳԽ և ՀԿԽ 1931 թ. սեպտեմբերի 11-ի վորոշումը)։

դ) Լայնորեն զարգացնել լավագույն բանվորների ՃՏ աշխատողների հարվածային և տնտհաշվարքային բրիգադների ու ցեխերի պարգևատրման ձևը, հատկացնել սոցմրցման ֆոնդից 2400 ռուբլի, այդ նպատակի համար։

11. Գործարկոմը պարտավորվում է սիստեմատիկ ղեկավարություն ցույց տալ և հրահանգել հարվածային ու տնտհաշվարկային բրիգադների կազմակերպիչներին, կազմակերպել ՃՏՍ-ի տեխնիկական աջակցությունը, կազմակերպել արտադրական խորհրդակցություններ, ապահովելով բանվորների և ՃՏ աշխատողների ու վարչության լայն մասնակցությունը։

12. Աշխատավորներին ցածր վորա-

կի՝ մշտական աշխատանքի փոխադրելը թույլատրվում է այն դեպքում, յերբ ԳԿՀ-ի կամ բժշկական հանձնաժողովը կգտնեն, վոր աշխատողը անընդունակ է տվյալ աշխատանքի համար, ինչպես նաև այն դեպքում երբ նա սիստեմատիկ կերպով թերակատարում է նորմաները և սահմանված տոկոսից ավելի խոտան է տալիս։

13. Մինչև մայիսի մեկը կազմել և փակցնել համապատասխան տեղերում աշխատողների պաշտոնական պարտականությունների մի այնպիսի տախտակ, վորպեսզի յուրաքանչյուրին հայտնի լինի իրեն հանձնարարած պարտականությունները։

14. Մինչև մայիսի մեկը կազմել փակցնել ցեխերում ու կարևոր վայրերում աշխատանքի ներքին կարգապահության կանոնադրությունը, համաձայնեցնելով այդպիսին գործարկոմի հետ։

15. Գործարան նոր ընդունվող և հեռացվող բանվոր-ծառայողների մասին իրազեկ պահել գործարկոմին։



## ԽԱՅ·ՇԱՏԱՎԱՐՁ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՁԱՓԱՎՈՐՈՒՄԸ

15. Աշխատավարձ.—

ա) Բանվորների տարիֆային ցանցի մինիմումը և գերարտադրության չափը թողնել մինչև այժմ գոյություն ունեցածը սակայն այն պայմանով, վոր մինչև մայիսի մեկը ստացվի կենտրոնից և կիրառվի աշխատավարձի հաշվելու նոր տեղեկագիրը։

բ) Վարչատեխնիկական աշխատողների նկատմամբ պահպանել գոյություն ունեցող ձևը, սակայն յելնելով աշխատողի վորակական և կատարողականության ցուցանիշներից, յուրաքանչյուր յեռամսյակում կատարել պարգևատրում աշխատավարձի ֆոնդի սահմաններում։

գ) Ծառայողների և կրտսեր սպասարկու կազմի վարձատրությունը կատարել ըստ պաշտոնական դրույքների (տես հավելված § 1) պարգևատրելով նրանցից լավագույններին աշխատավարձի ֆոնդի սահմաններում։

գ) Ըստ 1933 թվի պլանով ընդունված արտադրողականության բարձրացման, բանվորների աշխատավարձը բարձրացնել 10 տոկոսով։

յե) 1933 թ. բանուժի և աշխատավարձի ֆոնդ սահմանել հետևյալը՝

| Հերթական NN | | Աշխատավորների միջին թիվը | Տարեկան միջին ամսական աշխատավարձ | Տարեկան աշխատավարձի ֆոնդը | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | Բանվորներ կաշը. | 213 | 1300 | 279900 | |
| 2 | » ստիլ ցեխի | 15 | 1300 | 18000 | |
| 3 | Կրտսեր սպասարկ. կազմ | 9 | 1025 | 9200 | |
| 4 | Ի.Տ աշխատողներ | 22 | 3197 | 73500 | |
| 5 | Ծառայողներ | 32 | 2200 | 70400 | |
| | Ընդամենը | 291 | 1540 | 448000 | |



16 Աշխատավարձի ծախսման և հրահանգների պատասխանատվությունը դրվում է գործարանի դիրեկտորի և Գործարկոմի նախագահի վրա։

17. Մինչև մայիսի մեկը, մշակել և փակցնել համապատասխան ցեխերում և վայրերում գներն, գանձումները և վճարումների մի այնպիսի տախտակ, որպեսզի յուրաքանչյուր բանվորը ինքը կարողանա հաշվել իրեն հասանելիքը և իրենից գանձվելիքը։

18. Լրիվին կիրառել խոտանի և պարապուրդների վերաբերյալ գոյություն ունեցող օրենքները, որի համար իր բարձության վրա դնել խոտանի և պարապուրդների հաշվառումը (տես. հավելված 2)։

19. Վերանայված նորմաները հաստատվում են մեկ տարվա համար, նորմաների վերանայումը թույլատրվում է միայն այն դեպքում, երբ փոխվում է աշխատանքի տեխնոլոգիական պայմանները և կիրառվում են բանվորների արտադրանքը բարձրացնող տեխնիկական կամ կազմակերպչական նոր միջոցառումներ։

ա) Արտադրանքի նորմաները սահմանում է վարչությունը, ելնելով հարվածային բանվորից, հաշվի առնելով տեխնիկական անխուսափելի պարապուրդները, խոտանի նորմալ տոկոսը և աշխատանքի ժամանակ հանգստի համար անհրաժեշտ ժամանակը։ Դրա հետ մեկ տեղ վարչությունը պարտավորվում է բանվորների համար տեխնիկական հրահանգավորում կազմակերպել այնպիսի հաշվով, որպեսզի յուրաքանչյուր նոր սահմանվող արտադրանքի նորմայի մասին բանվորը ստանա մանրամասն բացատրություն և այդ հասկանալի լինի նրան։

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՑՈՒՄԸ

20. Վարչությունը պարտավորվում է՝

ա) Կատարել աշխատանքի պայմանների առողջացման (տեխնիկայի անվտանգության և սանիտարական) բոլոր միջոցառումները համաձայն աշխատանքի անվտանգության պայմանագրի (տես հավ. 3)։ Գործար-



կոմը պարտավորվում է հսկողություն սահմանել այդ նպատակի համար նախատեսնված գումարների ծախսման վրա։

բ) Ոչ ուշ քան 1933 թ. ապրիլի 31 ը գործարանը ապահովել տեխնիկական և սանիտարական պահանջներին համապատասխանող ճաշարաններով, որտեղ տեղավորվեն առնվազ 100 հոգի յուրաքանչյուր հերթին։ Ճաշարանի սպասարկության համար ունենալ սառցարան, բանջարեղենի մթերանոց և այլն։

գ) Գործարանում բանվորների սեփական հագուստները պահելու համար ունենալ պահարաններ, իսկ պահելու կարգը սահմանում են ցեխ. կոմիտեները առանձին համաձայնությամբ։

դ) Հանդերձարանում պահվող հագուստների վրա սահմանել հսկողություն կորուստները կանխելու համար։

ե) Պահել աշխատանքի ժամանակ աշխատողներին պատկանելիք հեծանիվները, իսկ վարչության անուշադրության հետևանքով կորած կամ գողացած հեծանիվի համար վճարել նրա արժեքը։

դ) Բուժ-կայանի համար շենք հատկացնել գործարանի հողամասում, տալով նրան համապատասխան սարքավորում և փոխադրական միջոցներ, հիվանդացող բանվորներին տուն կամ հիվանդանոց փոխադրելու համար։

21. Վարչությունը պարտավորվում է 1933 թվի ընթացքում իր հաշվին հանգստյան տուն ուղարկել ութ (8) և սանատորիա կամ կուրորտ չորս (4) հոգի հարվածային աշխատողներից, որոնք կատարում և գերակատարում են իրենց պլանները և կարիք են զգում բուժվելու։

22. Վարչությունը պարտավորվում է տեխնիկայի անվտանգության համար դասընթացքներ կազմակերպել և նրանցով անցկացնել բոլոր նոր աշխատողներին։ Բանվորները պարտավորվում են կատարել տեխնիկայի անվտանգության համար սահմանված պահանջները և ժամանակին հաղորդել վարչությանը այն խախտումների մասին, որոնք յերևան կհանվեն։

23.—Գործարանի վարչության պատկանող բնակարանների բաշխումը կատա-



րում է վարչությունը համաձայնեցնելով գործարկոմի հետ։ Սենյակ ստանալու գերազանց իրավունք ունեն առաջին հերթին հարվածայինները։ Կառուցվող բնակարանները բաժանվում են բանվորների վրա նախօրոք, որպեսզի տան ապագա բնակիչները մասնակցեն տների ժամանակին կառուցվելու հասարակական հսկողությունը ապահովելու գործին։

24. Արտադրության մեջ աշխատող բանվոր-ծառայողներին տրվում է տարեկան 12. աշխ. օր հերթական արձակուրդ։ Ջափավորված ժամերով աշխատողներին կարելի չե տալ մինչև 12 բան. օր լրացուցիչ արձակուրդ, նախօրոք համաձայնություն գալով գործարկոմի հետ։

25. Վարչությունը պարտավորվում է բուֆետներում հարմարեցնել տաք նախաճաշի կազմակերպումը, մասնակից դարձնելով այդ աշխատանքին կոոպերատիվ և մյուս կազմակերպություններին։

26. Գործարկոմի հետ մեկտեղ ճաշարանում կազմակերպում է հարվածայինների առանձին սեղան լավորակ ճաշերով։

27. Գործարկոմը պարտավորվում է սիստեմատիկ մասսայական հսկողություն կազմակերպել փակ բաշխիչների, ճաշարանների և բուֆետների աշխատանքների վրա, ամենօրյա գործնական օգնություն ցույց տալով բանվորների մատակարարման ու սննդի բարելավման գործին։

## 5. ԲԱՆՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՅԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

28. Վարչությունը իր վրա է վերցնում բան. մատակարարման գործի կազմակերպումը հատկացնելով այդ նպատակի համար 80000 ռուբլի։

29. Ոժանդակ տնտեսության աշխատանքների կազմակերպումը և ղեկավարումը կատարում է վարչությունը։ Տնտեսության մեջ խոշոր չափով մասնակցելու յեն բանվոր-ծառայողները և նրանց ընտանիքները, վորոնց կազմակերպելու և աշխատանքի հանելու պարտականությունը ընկնում է գործարկոմի վրա։



30. Վարչությունը պարտավորվում է՝

ա) Ձեռնարկության աշխատողների յերեխաների համար բանալ մանկապարտեզ, հոգալով նրա շենքը և հատկացնելով այդ գործի համար 3000 ռուբլի։

բ) Պրոլետարական ղեկավարությունը գյուղում ուժեղացնելու համար, շեֆ. գյուղում կատարվելիք աշխատանքին հատկացնել 500 ռուբլի։

գ) Ցիրկուլար-և Պաշը-Ավիաքիմի աշխատանքները ծավալելու համար հատկացնել 1000 ռուբլի։

դ) Պիոներական աշխատանքների համար հատկացնել 1000 ռուբլի։

31. Կուլտ-կրթական աշխատանքների համար վարչությունը վճարած աշխատավարձից հատկացնում է գործարկոմին մեկ տոկոսը, բացի այդ իր հաշվին պահպանում է ակումբը հոգալով նրա վառելիքը, լուսավորությունը և նորոգումը։

## 6. ՊՐՈՖՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

32.—Պրոֆմիության անդամները վայելում յեն հետևյալ առավելությունները

ա) Աշխատանքի պահել այն դեպքերում, երբ ձեռնարկությունը կրճատում է ավելորդ բանվորը։

բ) Ավելի բարձր վորակավորման աշխատանքի փոխադրել։

գ) Ընդունել դպրոցներ ու վորակավորման բարձրացման դասընթացներ։

դ) Առաջին հերթին բնակարան հատկացնել գործարանի ունեցածից։

ե) Երեխաներին առաջին հերթին զանազան դպրոցներ ու մանկապարտեզներ ընդունել տալ։

զ) Առաջին հերթին տալ հանգստյան տների, կուրորտների և սանատորիաների ուղեգրերը։

## 7. ՄԻՋՈՑՆԵՐ ՊՐՈՖ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

33.—Գործարկոմի կարիքների համար, վարչությունը հատկացնում է ամբողջ աշխատավարձի 2 տոկոսը։ Տրամադրում է գործարկոմին աշխատանքի սենյակ (վառելիք, սանիտարական միջոցներ, վերանորոգում, պահպանության ծախսեր և այլն)։



34. Սույն պայմանագրի կատարման վրա հսկելու, ինչպես աշխատանքային կոնֆլիկտները լուծելու համար, կազմակերպում են համագործարանային և ցեխային ԳԿՀ-ներ, վորոնք գործում են Աշխժողկոմատի կանոնադրությամբ։

## 8. ԿՈԼ-ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՍՏՈՒԳԵԼՈՒ ԿԱՐԳԸ

35. Վարչությունը և գործարկոմը պարտավորվում են կազմակերպել փոխադարձ պարտավորությունների ամենօրյա սիստեմատիկ ստուգում։ Կոլպայմանագրի խախտում հայտնաբերելիս վարչությունը և գործարկոմը պարտավորվում են անմիջապես միջոցներ ձեռք առնել այն վերացնելու համար։

Ամեն յերեք ամիսը մեկ անգամ վարչությունը յեվ գործարկոմը պարտավորվում են կազմակերպել կոլպայմանագրի մասսայական ստուգում, պայմանագիրը խախտե-

լու համար, ղեկավար աշխատողներից կոնկրետ մեղավորները յենթակա յեն պատասխանատվության։ (Տես քր. օր. 160-րդ հոդվածը)։ Յուրաքանչյուր բանվոր ՃՏ-աշխատող և ծառայող յենթակա յեն դիսցիպլինայի պատասխանատվության ըստ տուժացուցակի, ինչպես և արտադրական ընկերական դատարանի առաջ, իսկ իբրև պրոֆմիության անդամ իրեն կազմակերպության առաջ։

36.—Վարչությունը պարտավորվում է տպագրել սույն պայմանագիրը բոլոր հավելվածներով 300 օրինակ և ոչ ուշ քան 1933 թ. ապրիլի 31-ը ձրի բաժանել բոլոր աշխատողներին։

Սույն հավաքական պայմանագիրը ուժի մեջ է 1933 թվի մարտի մեկից մինչև 1934 թվի մարտի մեկը։

Գործ... ...ԱՐՈՒԹՅԱՆ)

Գործ. ... ...ԱԶԱՏՅԱՆ)

ՀՀ Ազգային գրադարան
NL0201854